

**ՀՀ ԿՐԹՈՒ ԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒ ԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒ ԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳՅՅԻՆ ԴՈՒ ԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՐՄԵՆ ՀՈՎԻԱՆՆԵՍԻ

**ՄՈՒ ԻՔՂԵՆԱՅ ԻՆ ԽՈՍՆՅ ՈՒ ԹԵՐԻ ՎԵՐԱՄՉ ԱԿՄԱՆ ԵՎ ՍՏԱՍՎԱԾ
ՄԻԱԳՈՒԹՅ ՈՒ ՆՆԵՐԻ ԻՒՄԱՆ ՎՐԱՂ ԵԳԻՐՈՂ ԵՎ ՆՈՐ ՆՅ ՈՒ ԹԵՐԻ
ՍՏԱՍՄԱՆ ՄԵՍԱԿԱՆ ԵՎ ՄԵԽՆՈՂ ՈԳԻԱԿԱՆ ԻՒՄՈՒՆՔՆԵՐԻ
ՄՉ ԱԿՈՒՄՂ**

Ե.16.02 – «Մե տալ ու ը ղ գ ի ա» մ ա ն ա գ ի տ ու լ թ յ ա մ բ
տ ե խ ն ի կ ա կ ա ն գ ի տ ու լ թ յ ու Ն ն ե Ր ի դ ո կ տ ո Ր ի
գ ի տ ա կ ա ն ա ս տ ի ճ ա ն ի հ ա յ ց մ ա ն ա տ ե ն ա խ ո ս ու լ թ յ ա ն

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2018

**МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
НАЦИОНАЛЬНЫЙ ПОЛИТЕХНИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ АРМЕНИИ**

ОВСЕПЯН АРМЕН ОГАНЕСОВИЧ

**РАЗРАБОТКА ТЕОРЕТИЧЕСКИХ И ТЕХНОЛОГИЧЕСКИХ ОСНОВ
ПЕРЕРАБОТКИ МОЛИБДЕНОВЫХ КОНЦЕНТРАТОВ И ПОЛУЧЕНИЕ НА
ОСНОВЕ ПОЛУЧЕННЫХ СОЕДИНЕНИЙ ЛЕГИРУЮЩИХ И НОВЫХ
МАТЕРИАЛОВ**

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени
доктора технических наук по специальности 05.16.02-
“Металлургия”

ЕРЕВАН- 2018

Ա տ ե ն ա խ ո ս ու լ թ յ ա ն թ ե մ ա ն հ ա ս տ ա տ Վ Է Լ Ե Հ ա յ ա ս տ ա ն ի ա գ գ ա յ ի ն
պ Ր Լ ի տ ե խ ն ի կ ա կ ա ն հ ա մ ա լ ս ա թ ա ն ի գ ի տ ա կ ա ն խ ո Ր Ի Ր Պ Ի կ ո Ղ մ ի ց

Պաշտոնական ընդդիմախոսներ՝
տեխն. գիտ. դոկտոր, պրոֆ. Կ. Յ.

Մարտիրոսյան
տեխն. գիտ. դոկտոր Գ. Խ. Կարապետյան
տեխն. գիտ. դոկտոր Մ. Գ.

Յամալջյան


Առաջատար կազմակերպչություն՝ ՀՀ ԳԱԱ Ա.Բ. Նալբանդյանի
անվան
Քիմիական ֆիզիկայի ինստիտուտ

Առենախոսություն պաշտպանությունը կայանալու է 2018թ. փետրվարի 20-ին, ժամը 15⁰⁰-ին, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանին առընթեր գործող ՀՀ ԲՈՅ-ի «Մետալուրգիա և նյութագիտություն» մասնագիտական խորհրդի (թվանիշ 031) «Մետալուրգիա» ենթախորհրդի (թվանիշ Ե.16.02) բազայի վրա ստեղծված «Մետալուրգիա» մասնագիտություն (թվանիշ Ե.16.02) հատուկ պաշտպանության մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, Երևան, Տերյան փ., 105:

Առենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀԱՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018թ. հունվարի 18-ին:

031 մասնագիտական խորհրդի գիտական
քարտուղար, տեխ. գիտ. դոկտոր, պրոֆ.  Ա.Ս.
Յովհաննիսյան

Тема диссертации утверждена ученым советом Национального политехнического университета Армении


Официальные оппоненты: докт.техн. наук, проф. В.А. Мартиросян
докт.техн.наук Г.Х. Карапетян
докт.техн. наук М. Г. Амамчян

Ведущая организация: Институт химической физики им. А.Б. Налбандяна НАН РА

Защита диссертации состоится 20 февраля 2018г. в 15⁰⁰ ч. на заседании специального совета “Металлургия” (шифр 05.16.02), созданного на базе подразделения “Металлургия” (шифр 05.16.02). Специализированного совета “Металлургия и материаловедение” (шифр 031) ВАК РА, действующего при Национальном политехническом университете Армении, по адресу: 0009, г. Ереван, ул.Теряна, 105.

С диссертацией можно ознакомиться в библиотеке НИУА.
Автореферат розослан 18 января 2018г.

Ученый секретарь Специализированного



ԱՏԵՆԱԽՈՒՄԻ ԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատանքի անարևոտ թյուր և **արդիականությունը**: Հայաստանի լեռնամերձային արդյունաբերությանը հանրապետության տնտեսության գերակա ճյուղերից մեկն է, որն է ապահովում արտահանման ծավալների մեծ մասը: Հանրապետությանը մոլիբդենի հայտնաբերված պաշարներով աշխարհում գրավում է առաջնակարգ տեղերից մեկը, որտեղ կենտրոնացված են մոլիբդենի համաշխարհային հաշվարկված պաշարների մոտ 10 տոկոսը: Հանրապետության հանքահարստացման ձեռնարկությունները (Քաջարանի, Ագարակի, Թեղուտի) տարեկան արտադրում են ~12000տ մոլիբդենի տային խտանյութեր: Այդ խտանյութերի համալիր վերամշակումը և դրահիման վրա ժամանակակից նյութերի ստացումը հանդիսանում է հանրապետության արդյունաբերության զարգացման կարևոր ուղղությունները: Ներկայումս այդ խտանյութերի վերամշակմամբ ստանում են ֆերոմոլիբդեն և փոքր քանակի կալցիումի մոլիբդատ:

Անկախ ստացվող նյութից, խտանյութերի վերամշակումը սկսում են օքսիդացուցիչ թրծումով, որի արդյունքում ստացվում են տեխնիկական մաքրության մոլիբդենի եռօքսիդ՝ հումք ֆերոմոլիբդենի ստացման համար և ծծմբային գազեր (SO_2 , SO_3), որոնք արտանետվում են մթնոլորտ, աղտոտելով շրջակայքը:

Մոլիբդենի եռօքսիդը ֆերոմոլիբդենի ստացման հիմնական ելանյութն է:

Ֆերոմոլիբդենը երկաթի և մոլիբդենի համաձուլվածք է 50...75% մոլիբդենի պարունակությամբ, որը օգտագործվում է պողպատների և եգիրման համար:

Ներկայումս լիգատուրաներին ներկայացվում են նոր պահանջներ գունավոր մետաղներից մաքրության, խտության, հալման ջերմաստիճանի, բաղադրության, ձուլագանգվածի համատեղության, երկաթի հալույթում լուծման արագության վերաբերյալ:

Հանրապետության գործարանները արտադրում են ստանդարտի պահանջներին բավարարող ֆերոմոլիբդեն: Սակայն ֆերոմոլիբդենն ունի թերություններ, բաղադրության անհամատեղություն (մոլիբդենի բաղադրությունը ձուլագանգվածի մեջ տատանվում է 45...70%), մեծ խտություն և հեղուկ մետաղում լուծման փոքր արագություն: Նշված գործոնները դժվարացնում են որակյալ պողպատների ստացումը մոլիբդենի պարունակության ստանդարտների սահմանների ցածր արժեքներով, մոլիբդենի տնտեսման նպատակով և նաև տարբեր հալույթների պողպատների հատկությունների ստանդարտացման համար: Բացի դրանից ֆերոմոլիբդենը մոլիբդենի տային խտանյութից ստացվող մոլիբդենային

արտադրանքի ամենաէժան արտադրատեսակն է, որը և արտահանվում է եվրոպական երկրներ:

Բացի Ֆերոմոլիբդենից օգտագործվում է նաև մանրաբյուրեղային կալցիումի մոլիբդատի փոշի, որի ինքնարժեքն ավելի ցածր է, բայց որպես լիգատուրա ունի թերուծյուններ:

Չնայած խոշոր ծավալներով բնական պաշարների առկայությանը, հանքահարստացման արտադրությունների գոյությունը, ինչպես նաև բարձր գները և շուկայի հուսալիությունը, ներկայումս հանրապետությունում կազմակերպված չէ մոլիբդենի մաքուր միացությունների արտադրությունը: Այս պրոբլեմի հիմքում ընկած է նորագույն առաջնակարգ տեխնոլոգիաների բացակայությունը: Մշակվող տեխնոլոգիան պետք է լինի Էկոլոգիապես պաշտպանված և մրցունակ:

Հանրապետությունում բարձր մաքրության մոլիբդենի երկսուլֆիդի, երկսիլիցիդի, կալցիումի և կապարի մոլիբդատների, մաքուր Ֆերոմոլիբդենի և ժամանակակից այլ նյութերի արտադրությունը բացակայում է, մինչդեռ մեծ շահութաբերություն ակնկալելու համար հարկավոր է արտահանել ժամանակակից վերջնական արտադրանք:

Բարձր մաքրության մոլիբդենի դիսուլֆիդը, որպես հակափական պինդ քսանյութ կիրառվում է կենցաղային սարքերում, էներգետիկայում, ռազմական, ավիացիոն և տիեզերական տեխնիկայում, որտեղ սովորական յուղերը և քսուքները կիրառելի չեն (բարձր ջերմաստիճան, ճնշում, վակուում, ագրեսիվ միջավայր, ճառագայթում և այլն), այն ևս փոխարինելի է: Հաշվի առնելով մաքուր և դիսպերս փոշիների մեծ պահանջարկը, բարձր շուկայական գինը և դրանցից նոր հակափական նյութերի ստացման հնարավորությունը, տեղական հումքի բազայի վրա գերմաքուր և դիսպերս 2H-MoS₂-ի ստացման տեխնոլոգիայի մշակումը ժամանակի հրամայականն է և ունի մեծ գիտագործնական նշանակություն:

Կալցիումի մոլիբդատը օգտագործվում է որպես լիգատուրա մոլիբդեն պարունակող պողպատների արտադրությունում:

Կապարի մոլիբդատի մոնոբյուրեղները, շնորհիվ բարձր ֆիզիկական և օպտիկական հատկությունների, մեծ կիրառություն ունեն ժամանակակից լազերային համակարգերում, ակուստոօպտիկական մոդուլյատորներում և դեֆլեկտորներում, միջուկային սարքերում, որպես ցածր ջերմաստիճանային սցինտիլյատորներ:

Մոլիբդենի երկսիլիցիդը շնորհիվ իր մի շարք հատկությունների էլեկտրահաղորդականության, ջերմահաղորդականություն և կիզակայունություն և այլն կիրառում է գտել ժամանակակից տեխնիկայում, հատկապես բարձր ջերմաստիճանային էլեկտրական տաքացուցիչների

արտադրության ընդունում, որոնք ապահովում են օդի միջավայրում մինչև 1800°C: Մոլիբդենի երկսիլիցիդը կիրառվում է նաև որպես ծածկու թափառման նյութ մոլիբդենի հիմքով հրակայուն համաձուլվածքները օքսիդացումից պաշտպանման համար: Հեռանկարային է նաև մոլիբդենի երկսիլիցիդի հիմքով կոմպոզիտային նյութերի կիրառությունը այսպես կոչված «կերամիկական» ներքին այրման շարժիչների արտադրության ընդունում:

Վերջին ժամանակներս խտանյութերի վերամշակման ավանդական եղանակներին փոխարինելու են գալիս ավելի արդյունավետ արդիական մեթոդներ: Դրանց թվին է պատկանում բարձր ջերմաստիճանային ինքնատարածվող սինթետիկ (ԲԻՍ) մեթոդը:

Այսպիսով մոլիբդենային խտանյութերի վերամշակման ռացիոնալ տեխնոլոգիայի մշակման խնդրի արդիականությունը միանգամային ակնհայտ է, որը պետք է ապահովի բարձր մաքրության լիգերոդ և նոր նյութերի ստացումը:

Այդ տեսակետից անենախոսու թեման խիստ արդիական է և հրատապ:

Հետազոտության ներքին նպատակը և խնդիրները:

Անենախոսու թեման հիմնական նպատակն է մշակել մոլիբդենի սուլֆիդային խտանյութերի համալիր վերամշակման շահույթաբեր, բնապահպանական նորմերին բավարարող արտադրական տեխնոլոգիաներ բարձր մաքրության մոլիբդենի երկսուլֆիդի, երկսիլիցիդի, կալցիումի մոլիբդատի, կապարի մոլիբդատի, մոլիբդենի եռօքսիդի և լեգիրոդ նյութերի ստացման համար և բացահայտել գործընթացների տեսական և տեխնոլոգիական հիմունքները:

Նշված նպատակի իրականացման համար աշխատանքում առաջադրվել և լուծվել են հետևյալ հիմնարար խնդիրները:

1. Մշակել մոլիբդենային խտանյութերի վերամշակման գործընթացների տեսական և տեխնոլոգիական հիմունքները մոլիբդենի մաքուր միացությունների՝ մոլիբդենի երկսուլֆիդի, երկսիլիցիդի, եռօքսիդի, կալցիումի և կապարի մոլիբդատների և նոր լեգիրոդ նյութերի ստացման համար:

2. Մոլիբդենի սուլֆիդային խտանյութերը նոսր թթուներով գունավոր մետաղներից մաքրման գործընթացի հետազոտումը, տեխնոլոգիական հիմունքների մշակման նպատակով:

3. Հետազոտել մոլիբդենիտային խտանյութերի տարրալուծման լուծույթների մաքրման և մայրակ լուծույթներից մետաղների համալիր կորզման օրինաչափուն թյունները:

4. Մշակել մոլիբդենիտային խտանյութերից ստացված լուծույթներից հիդրոմետալուրգիական եղանակով, կալցիումի մոլիբդատի և ստեխիոմետրական բաղադրությամբ

գերմաքուր կապարի մոլիբդատի ստացման տեխնոլոգիա: Յետազոտել կալցիումի մոլիբդատի և կապարի մոլիբդատի ստացման գործընթացի մեխանիզմը, կինետիկան և լավարկված ռեժիմները:

5. Մշակել կալցիումի մոլիբդատի հիմքով նոր լեգիրող նյութերի ստացումը, մոլիբդենով պողպատների լեգիրման նպատակով:

6. Յետազոտել մոլիբդենի սուլֆիդային խտանյութերից և սիլիցիումից, վառարանային և բարձրջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզի մեթոդներով, մոլիբդենի երկսիլիցիդի ստացման տեսական ու տեխնոլոգիական հիմունքները, Mo-Si համակարգի թերմոդինամիկան, մեխանիզմը և ռեժիմները: Ուսումնասիրել սուլֆիդային խտանյութերից ստացված մոլիբդենի երկսիլիցիդի ֆազային ու կառուցվածքային հատկությունները, բարձրջերմաստիճանային էլեկտրատաքացուցիչների պատրաստման և պողպատների լեգիրման և թթվածնազտման տեխնոլոգիաների համար:

7. Յետազոտել մոլիբդենի սուլֆիդային խտանյութերից սինթեզված սիլիցիումի սուլֆիդների կիրառման ոլորտները, պղնձի օքսիդացած հանքանյութերի մակերևութային սուլֆիդացման և պղնձի կորզման առավել նպատակահարմար տեխնոլոգիական ուղղության մշակման նպատակով:

8. Կատարել մշակված տեխնոլոգիաների տեխնիկատնտեսական հիմնավորում, շահութավետության գնահատում:

Պք տպմուտք ան ներկայացվող հիմնական դրույթները

1. Մոլիբդենիտային խտանյութերի վերամշակման գործընթացների տեսական և տեխնոլոգիական հիմունքները, մոլիբդենի մաքուր միացությունների՝ երկսուլֆիդ, երկսիլիցիդ, եռօքսիդ, կալցիումի և կապարի մոլիբդատներ և նոր լեգիրող նյութերի ստացումը և բնապահպանական խնդիրները:

2. Մոլիբդենիտային խտանյութերը ուղեկից միներալներից մաքրումը, հատկությունների հետազոտումը, լավարկված ռեժիմների ընտրումը և համալիր վերամշակմամբ տեխնիկական մաքրության մոլիբդենի եռօքսիդի և բարձր մաքրության մոլիբդենիտի ստացան տեխնոլոգիական պարամետրերը:

3. Ստացված տարալուծման լուծույթներից, հիդրոմետալուրգիական եղանակով, կալցիումի մոլիբդատի և կապարի ստեխիոմետրական բաղադրության բերմաբ գերմաքուր մոլիբդատի ստացման տեխնոլոգիան:

4. Մոլիբդենի սուլֆիդային խտանյութերից, վառարանային և բարձրջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզի մեթոդներով, մոլիբդենի երկսիլիցիդի ստացման տեխնոլոգիան, Mo-Si համակարգի թերմոդինամիկական և տեսական հիմնավորումները, ռեակցիաների մեխանիզմը և

լ ավարկված ռեժիմները: Խառանյուղերից բարձր շերտմաս տիճանային ինքնատարածվող սինթետիկ մեթոդով ստացված արգասիքների ռենտգենաֆազային և միկրոկառուցվածքային հետազոտությանը ներկայումս ներկայումս:

5. Մոլիբդենի սուլֆիդային խառանյուղերի սիլիցիոն մոլվերականգնման գործընթացում ստացված սիլիցիոն միերկսուլֆիդի և նրա նատրումական թիոկոմպլեքսի կիրառումով, պղնձի օքսիդացած միներալների, աղացման փուլում, մակերևութային սուլֆիդացումը, մեխանիզմը, կինետիկան, տեխնոլոգիական ռեժիմները և պղնձի փրփրաֆլուտացումով կորզման տեխնոլոգիայի մշակումը:

6. Լեգիրող նյութերի ստացումը, կալցիոն մոլիբդատի հատկավորման տեխնոլոգիայի մշակումը, լավարկված ռեժիմները:

7. Հատկավորված կալցիոն մոլիբդատով ցածր լեգիրացված արդյառների լեգիրման տեխնոլոգիան և մոլիբդենի երկսիլիցիդով լեգիրման և թթվածնազտման տեխնոլոգիան:

8. Մոլիբդենի սուլֆիդային խառանյուղերի համալիր վերամշակման և նրանցից մոլիբդենի մաքուր միացությունների՝ երկսուլֆիդի, երկսիլիցիդի, եռօքսիդի, կալցիոն մի և կապարի մոլիբդատների և նոր լեգերող նյութերի ստացման մշակված տեխնոլոգիաների տեխնիկատնտեսական հիմնավորումը:

Աշխատանքի գիտական նորույթը

1. Առաջին անգամ բացահայտվել է մոլիբդենիտային խառանյուղերի մեջ գտնվող խառնուրդ միներալների, նոսր թթուներով, տարալուծման գործընթացի տեսական և տեխնոլոգիական օրինաչափությունները: Ցույց է տրված, որ խառնուրդների մաքրման համար անհրաժեշտ է միներալների մակերևույթները մաքրել ֆլուտացիայի նյութերից, որը հնարավորություն է տալիս ինտենսիվացնել խառնուրդ միներալների ընտրողական տարրալուծումը:

2. Մոլիբդենի սուլֆիդային խառանյուղերից ստացված լուծույթներից առաջին անգամ մշակվել է կալցիոն մի և գերմաքուր կապարի մոլիբդատի ստացման տեխնոլոգիաները: Ցույց է տրվել, որ ամոնիում մի մոլիբդատի լուծույթից կապարի մոլիբդատի նստեցման մեթոդն ավելի նախընտրելի է:

3. Առաջին անգամ հաստատված է $\text{MoS}_2\text{-Si}$ համակարգերում ֆիզիկաքիմիական փոխակերպումները, ընթացող ռեակցիաների մեխանիզմը և կինետիկան: Պարզվել է, որ շերտմաս տիճանի բարձրացմանը զուգընթաց մեծանում է մոլիբդենի երկսիլիցիդի ստացման հավանականությունը, առաջանում են նաև սիլիցիոն մի սուլֆիդներ SiS_2 և SiS :

4. Առաջին անգամ բացահայտվել է սիլիցիոն մի երկսուլֆիդի և նրա նատրումական թիոկոմպլեքսով պղնձի օքսիդացած միներալների, աղացման փուլում, մակերևութային սուլֆիդացման գործընթացի մեխանիզմը,

կինետիկան, տեխնոլոգիական ռեժիմները և պրևձի փրփրաֆլուտացումով կորզման տեխնոլոգիան:

5. Առաջին անգամ ցույց է տրված, որ մոլիբդենի տային խտանյուն թերի ցածր ջերմաստիճանային թրծման կիրառումը պարզեցնում է գունավոր մետաղներից մաքրումը և հետագա տարալուծման ժամանակ նվազեցնում է մոլիբդենի կորուստները:

6. Ձևակերպվել է հատիկավորված կալցիումի մոլիբդատով և մոլիբդենի երկսիլիցիդով ցածր լեգիրված պողպատների լեգիրման և թթվածնազտման սկզբունքը: Բացահայտվել է ցածր լեգերված պողպատներում հատիկավորված կալցիումի մոլիբդատի և մոլիբդենի երկսիլիցիդի լուծման մեխանիզմը և կինետիկան:

Աշխատանքի կիրառական նշանակությունը

Աշխատանքի կիրառական նշանակությունը կայանում է նրանում, մշակվել է մոլիբդենի սուլֆիդային խտանյուն թերից տնտեսապես շահավետ և բնապահպանական նորմերին բավարարող արտադրական տեխնոլոգիաներ բարձր մաքրության մոլիբդենի երկսուլֆիդի, երկսիլիցիդի, կապարի մոլիբդատի և լեգիրող նյութերի ստացման համար և բացահայտվել է գործընթացների տեսական և տեխնոլոգիական հիմունքները:

Ստացված բարձր մաքրության և դիսպերսության մոլիբդենի երկսուլֆիդը կարող է օգտագործվել կենցաղային սարքերում ու մեքենաներում, շարժիչների յուղերի մեջ որպես շփումը փոքրացնող հավելանյութ, էներգետիկայում, ավիացիոն և տիեզերական տեխնիկայում և այլն: Այն էքստրեմալ պայմաններում աշխատող ամենալավ հակափական նյութն է:

Երկսիլիցիդի ստացումը անմիջական խտանյուն թերից հնարավորություն է տալիս կրճատել արտադրանքի ինքնարժեքը և վերականգնել տաքացուցիչների արտադրությունը Հանրապետությունում: Մոլիբդենի հիդրոմետալուրգիական խտանյուն թերից երկսիլիցիդի ստացումը հնարավորություն է տալիս ստանալ որակյալ համալիր լիգատուրա, որը պողպատի արտադրությունում փոխարինում է տարրային ֆերոհամածուլվածքներին (ֆերոմոլիբդեն, ֆերոսիլիցիում):

Մշակվել է պրևձի օքսիդացած հանքանյութերից պրևձի սուլֆիդների ստացման տեխնոլոգիա, որի հիմնական ամանձնահատկությունը կայանում է օքսիդացած հանքանյութերի և սուլֆիդարարի՝ նատրիումի թիոկոմալեքսի ($\text{Na}_2[\text{SiS}_3]$) համատեղ մշակումը աղացման փուլում: Պրևձի օքսիդացած և խառը, դժվար հարստացվող հանքանյութերի ու հանքամնացուցիչների և թափոնակույտերի վերամշակումը կնպաստի լուծելու Հայաստանի էմնահանքային արդյունաբերության հումքային, տնտեսական և էկոլոգիական խնդիրներ:

Մշակվել է հատիկավորված կալցիումի մոլիբդատով և մոլիբդենի երկսիլիցիդով ցածր և բարձր պարունակությամբ և բթված նազտման տեսիլ ու զգիլի համար: Այն հետաքրքիր է իր յուրաքանչյուր օգտագործելի և օգտագործված տարբարակներով և արտադրության ու նույնիսկ առաջացած թափոններով:

Ատենախոսության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը

Ատենախոսության համար տեսական հիմք են ծառայել հայրենական և արտասահմանյան դասական և ժամանակակից աշխատությունները: Հետազոտությունները համար տեղեկատվական հիմք են հանդիսացել հրատարակված պաշտոնական տեղեկատուները և տեղեկագրերը, ինչպես նաև տեսիլի կանոնները, պարբերականները, արտոնագրերը, ԳՈՍՏ-երը և այլն:

Հետազոտությունները ընթացքում կիրառվել են համակարգչային, գրաֆիկական, քիմիական, ռենտգենաֆային, սպեկտրային, ատոմա-աբսորբման, ջերմածանրաչափական և դիֆերենցիալ-թերմիկական և այլ վերլուծական մեթոդներ:

Աշխատանքի արդյունքների փորձարկումը

Ատենախոսության հիմնարկությունները և գործնական հանձնարարականները գեկոնցվել և քննարկվել են ՀԱՊՀ-ի տարեկան գիտաժողովներում, ՀԱՊՀ-ի «Մետալուրգիա և Նյութագիտություն» ամբիոնի գիտական սեմինարներում և ՀՀ ԳԱԱ ԸԱԹԻ-ի գիտական խորհրդում, հանրապետական և արտասահմանյան գիտական կոնֆերանսներում: Հետազոտությունները ընդգրկված են ՀՀ ԳՊԿ-ի գիտական և գիտատեսիլի կանոններում, պայմանագրային, հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների ծրագրերում:

Հրատարակումները: Ատենախոսության հիմնական արդյունքները հրատարակված են 68 աշխատանքներում, այդ թվում 31 հոդվածներ՝ հրատարակվել են գրախոսվող ՀՀ ԲՈՅ-ի կողմից ընդունելի ամսագրերում և հրատարակության ու ներդրում (8-ը՝ արտասահմանում, 9-ը՝ առանց համահեղինակների), 3-ը գյուտի արտոնագրեր են, 17 աշխատանքներ ուրուք հրատարակվել են գիտական ժողովածուներում և միջազգային գիտաժողովների նյութերում, իսկ 17-ը՝ հրատարակվել են գիտական կոնֆերանսների թեզերի ժողովածուներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 6 գլուխներից, ընդհանուր եզրակացություններից և 227 անուն օգտագործված գրականություններից: Այն շարադրված է 221 համակարգչային տպագիր էջերում, ներառում է 89 նկար, 61 աղյուսակ և երկու հավելված:

ԱՏԵՆԱՒՈՍՈՒ ԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒ ԹՅՈՒՆԸ

Ներածու թյ ու նու մ համառոտ հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությանը, ներկայացված են հետազոտությանը նկատմամբ հիմնական նպատակը, ցույց է տրված գիտական նորոգումը և կիրառական նշանակությանը: Առաջադրված են հետազոտությանը նկատմամբ հիմնական խնդիրները, նշված են հետազոտման հիմնական փուլերը:

Առաջին գլխում կատարվել է հայրենական և արտասահմանյան գրականության վերլուծությանը մոլիբդենի սուլֆիդային խտանյութերի վերամշակման մեթոդների, մաքուր միացությանը նկատմամբ, երկսուլֆիդի, կալցիումի և կապարի մոլիբդատների, երկսիլիցիդի և եգիպտացորենի ստացման տեխնոլոգիական գործընթացների վերաբերյալ: Գրական ակնարկից և վերլուծությանը հետևում է դրանց առանձնահատկությանը, առավելությանը նկատմամբ թերությունները: Հիմնավորվել է աշխատանքի նպատակը և հետազոտությանը նկատմամբ խնդիրները:

Երկրորդ գլխում տրված են ելանյութերի տեխնիկական բնութագրերը և կատարվել է չափիչ-հսկիչ սարքավորումների ընտրումը, մշակված է հետազոտությանը նկատմամբ մեթոդիկան: Որպես ելանյութեր ընտրվել են KMF և KMФ մակնիշների ստանդարտ մոլիբդենի սուլֆիդային խտանյութերը: Վերամշակման համար ընտրվել են մաքուր նյութեր կալցիումի քլորիդ, ազոտական թթու, աղաթթու, KP00 մակնիշի սիլիցիում, ուսումնասիրվել են դրանց բնութագրերը:

Գերմաքուր մոլիբդենի երկսուլֆիդի մանրացման համար օգտագործվել է շիթային աղաց 2С տիպի կայանք՝ СПВ հարթ աղացման խցով:

Երկաթի հալումը մոլիբդենի երկսիլիցիդի և ուծման ջերմային էֆեկտների որոշման համար օգտագործվել է իզոթերմային կալորիաչափ:

Որպես լիգանտուրա, հատիկավորված կալցիումի մոլիբդատի և մոլիբդենի երկսիլիցիդի արտադրական փորձարկումները կատարվել են Վոլգոգրադի «Կրասնի Օկտյաբր» մետալուրգիական գործարանում, 200 և 150 տ սարդոլությանը ելեկտաաղեղային և մարտենյան վառարաններում: Պողպատներում սարքերի համաեռությանը որոշվել է MS-66 «Cameka» (\$րանսիա) միկրոռենտգենային կտրային միկրովերլուծիչի միջոցով: Ֆազային վերլուծությանը կատարվել է ДРОН-2 և գերմանական արտադրության URD 63 ռենտգեն դիֆրակտոմետրերի օգնությամբ:

Խտանյութերի բաղադրությանը և խառնուրդները որոշվել են ատոմաբաժանման սպեկտրաչափի (Perkin Elmer AAS-600) միջոցով:

Երրորդ գլխում նվիրված է մոլիբդենի տային խտանյութերի խառնուրդ միներալներից մաքրման գործընթացներին, մոլիբդենի եռօքսիդի, բարձր մաքրությանը և դիսպերսությանը երկսուլֆիդի և կալցիումի ու

կապարի մոլիբդատների ստացման տեսական և տեխնոլոգիական հիմունքների մշակման համար:

Մոլիբդենիտային խտանյուղերի խառնուրդներից մաքրման գործընթացների հետազոտման համար որպես էլանյուղ է ընտրվել մոլիբդենիտային ստանդարտ խտանյուղը (ГОУС 212-76): Հետազոտությունների համար վերցվել է պրոնիբարձր պարունակությամբ (1,2% Cu) Ազարակի հարստացուցիչ ֆաբրիկայի մոլիբդենիտային խտանյուղը:


Որակյալ պողպատներում վնասակար խառնուրդներ են համարվում S, P, Cu, Zn, Pb, Sn, Sb և այլն: Առավել վնասակար է Cu-ը: Այն անցնելով պողպատի մեջ, վերջինիս տալիս է սառնաբեկունություն և նպաստում է խոշորահատիկ կառուցվածքի ստացմանը: Ca և Mg-ը խանգարում են ծծմբի հեռացմանը և մետաղական մոլիբդենի արտադրությունում, կիսալրուկից մոլիբդենի ամիակաշրջով տարալուծման գործընթացին:

խտանյուղը ենթարկվում է նախնական ցածրջերմաստիճանային թրծման 673...773⁰ օդի և ջրային գոլորշու միջավայրում, 2...3 ժամ տևողությամբ: Ջուրը թթվածնի լավ փոխադրող է, նպաստում է սուլֆիդների օքսիդացմանը հատիկների ներսում և միևնույն ժամանակ նվազեցնում է թթվածնի ակտիվությունը, ինչի հետևանքով առաջանում է մոլիբդենի ցածր օքսիդներ:

Mo-S-O համակարգում կայուն կոնդենսացված ֆազեր են՝ Mo, Mo₂S₃, MoS₂, MoS₃, MoO₂ և MoO₃: MoS₂-ի օքսիդացումը բազմաստիճանային բնույթ է կրում. MoS₂ → MoS₂O → MoSO₂ → MoO₂ → Mo_nO_{3n-1} → MoO₃:

Կիսաթրծված մոլիբդենիտային խտանյուղը գունավոր մետաղներից մաքրման համար տարալվացվում է 4...7%-անոց աղաթթվի լուծույթով, պ:հ=1:2 հարաբերությամբ, 2...3 ժամ տևողությամբ: Ցածրջերմաստիճանային թրծման ժամանակ օդի և ջրային գոլորշու միջավայրում մետաղների սուլֆիդները (FeS₂, CuFeS₂, ZnS, PbS) առաջացնում են սուլֆատներ և օքսիդներ, որոնք լավ լուծվում են 4...7% աղաթթվի լուծույթում: Կալցիումի մոլիբդատը լավ լուծվում է նոսր աղաթթվի լուծույթում: Ֆերոմոլիբդատը նույնպես լուծվում է նոսր աղաթթվի լուծույթում: Մոլիբդենիտը օքսիդանում է մասնակիորեն՝ առաջացնելով MoO₂-ը, որը, ինչպես նաև MoS₂-ը չեն լուծվում աղաթթվի նոսր լուծույթում:

Նկ.1 –ում բերված է կիսաթրծված մոլիբդենիտային խտանյուղի պրոնիբարձր պարունակության փոփոխությունը 6%-անոց աղաթթվի լուծույթով տարալուծման դեպքում:



Նկ. 1. 6%-անոց աղաթթվով տարրալվացման ժամանակ պղնձի

պարուն նակուղթյան կախուռ մը գործընթացի տևողությունը

Հետազոտվել է նաև մոլիբդենիտային խտանյուղերը անմիջական նոսր թթուներով մաքրման գործընթացները: Մոլիբդենիտային խտանյուղը պարունակում է 2...4% \$F\$լոտոագդանյուղեր, որոնք արդյունաբերական նավթայուղեր են, կերոսին, բուտիլային քսանտագենատ և այլն: Սրանք դժվարությամբ են առաջացնում խտանյուղի խառնուրդներից անմիջական մաքրման հիդրոմետալուրգիական գործընթացներում: \$F\$լոտոագդանյուղերից խտանյուղի մաքրումը կատարվել է նատրիումի մետասիլիկատի ($Na_2SiO_3 \cdot 9H_2O$) և $O\Gamma-7$ կամ $O\Gamma-10$ մակնիշի էմուլսարարի ջրային լուծույթներով, սենյակային ջերմաստիճանում:



Փորձերի արդյունքներով ընտրվել են լավարկված ռեժիմները ջերմաստիճանը $60...65\text{ }^\circ C$, մանրացումը 30 րոպե, խտանյուղ-նատրիումի մետասիլիկատ և էմուլսարար հարաբերությունը վերցվել է զանգվածային բաժիններով, $1:(0,05...0,09):(0,003...0,01)$, պի հարաբերությունը $1:1$:



Կատարվել է պարզված քաղաղման եղանակով խտանյուղի մաքրում շլամից և ածխային մասնիկներից:

Մնացած խառնուրդներից ($CuFeS_2$, FeS_2 , SiO_2 , Al_2O_3 , $CaCO_3$, $MgCO_3$ և այլն) հետագա մաքրումը կատարվել է նոսր թթուներով տարրալվածման միջոցով:

Տարրալուծումը բարդ հետերոգեն գործընթաց է կախված մի շարք տեխնոլոգիական գործոններից (ջերմաստիճան, ճնշում, ժամանակ, ազդանյուղերի կոնցենտրացիա, խառնման արագություն, խտանյուղի հատիկաչափական կազմ, պի հարաբերություն) և այլն: Հետազոտությունները կատարվել են խառնուրդների ընտրողական տարրալուծումով: Հաշվի առնվելով նոսր ազոտական թթվի պասիվացնող ազդեցությունը MoS_2 -ի լուծման վրա:

3%-անոց ազոտական թթվով տարրալուծման դեպքում լուծույթ են անցնում CaO , MgO , $CaCO_3$, $MgCO_3$, $CaMoO_4$ միներալները: Ընթանում են հետևյալ ռեակցիաները.





Փորձերը կատարվել են 20, 40, 60°C ջերմաստիճաններում, 1, 3, 5 ժ տևողությամբ, պ: հ = 1:2: Բաժակի մեջ լցվել է 1000 մլ 3%-անոց ազոտական թթու և անընդատ խառնումով լցվել է 500 գ ֆլոտացիայի մաքրված խտանյութ: Սահմանված ժամանակից հետո խյուսը ֆիլտրվել է և լվացվել է ջրով մինչև pH = 6,5: Ստացված լուծույթները միացվել են, չափվել է ծավալը և կատարվել է վերլուծություն: Լվացված խտանյութը չորացվել է, որոշվել է ելքը և կատարվել է վերլուծություն: Աղ. 1-ում ներկայացված են լվացման արդյունքները: Պարզվել է, որ ջերմաստիճանի և տարալուծման ժամանակի բարձրացման դեպքում մոլիբդենի անցումը լուծույթ անսչան է (0,33...0,52 %) միևնույն ժամանակ երկաթի լուծելիությունը ավելանում է 13,78-ից մինչև 22,47%: Ստացված խտանյութի բաղադրությունը եղել է Mo - 54,7%, Fe- 3,49%:



Աղյուսակ 1

Մոլիբդենիտային խտանյութերի, 3% -անոց ազոտական թթվով, լվացման հաշվեկշիռը

Տար. ժամ	t °C	Նյութի անվան.	Կշիռ, ծավ. մլ	Mo-ի պարունակ.			Fe-ի պարունակ.		
				%, գ/լ	գ	% սկզբ.	գ/լ	գ	% սկզբ.
1	20	Mo խտ.	486	56,0	272,6	99,67	3,13	15,0	86,20
		Լուծ. նլյ.	2000	0,46	0,92	0,33	1,2	2,4	13,80
		Ընդամ.	-	-	273,52	100	-	17,4	100
3	20	Mo խտ.	480	56,78	272,58	99,6	3,11	14,9	85,67
		Լուծ. նլյ.	2000	0,46	0,92	0,34	1,25	2,5	14,33
		Ընդամ.	-	-	273,5	100	-	17,4	100
5	20	Mo խտ.	480	56,7	272,16	99,64	3,0	14,4	85,21
		Լուծ. նլյ.	2000	0,5	1,0	0,36	1,25	2,5	14,79
		Ընդամ.	-	-	273,16	100	-	16,9	100
1	60	Mo խտ.	478	56,7	270,9	99,56	2,99	14,3	81,89
		Լուծ. նլյ.	2000	0,6	1,2	0,44	1,58	3,16	18,11
		Ընդամ.	-	-	272,13	100	-	17,4	100
3	60	Mo խտ.	476	56,7	269,9	99,48	2,91	13,8	79,48
		Լուծ. նլյ.	2000	0,68	1,36	0,52	1,79	3,58	20,52
		Ընդամ.	-	-	271,25	100	-	17,4	100

5	60	Mo խառ.	472	56,82	268,19	99,48	2,86	13,5	77,53
		Լ ու ծ ն լ յ .	2000	0,7	1,4	0,52	1,94	3,92	22,47
		Ը ն դ ա մ .	-	-	269,6	100	-	17,4	100

Մոլիբդենիտային խտանյուղերի մաքրումը քվարցիտից (SiO₂) կատարվել է ֆտորաջրածնական թթվով տարալուծմամբ: Ընթանում են հետևյալ ռեակցիաները.



Սկզբնական խտանյուղում չլուծվող նստվածքը կազմել է 3,4%: Վերցվել է 200գ խտանյուղ: Տարալուծումը կատարվել է հետևյալ կերպ, մեկ կշռային մաս խտանյուղի համար վերցվել է 0,7 մաս ջուր և խառնելով ավելացվել է 0,3 մաս 40%-անոց ֆտորաջրածնական թթու: Փորձերը կատարվել են 40 և 60°C ջերմաստիճաններում, 2, 4, 6, 8 ժ տևողությամբ, աննդատ խառնումով: Տարալուծումից հետո ֆիլտրվել է և լվացվել ջրով մինչև pH = 6,2...6,4, լվացված խտանյուղը չորացվել է 120...130 °C ջերմաստիճանում և ենթարկվել է վերլուծության: Տարալուծման արդյունքների հաշվեկշիռը ներկայացված է աղ 2-ում, որից երևում է, որ ֆտորաջրածնական թթվի միևնույն ծախսի դեպքում, արդյունքները լավանում են տարալուծման ժամանակի և ջերմաստիճանի բարձրացման ժամանակ:





Լավագույն արդյունքները ստացվել են տարալուծման ջերմաստիճանը 60 °C և ժամանակը 6...8 ժ, անլուծելի նստվածքը կազմել է 0,04...0,006%:

Աղյուսակ 2

20...22%-անոց ֆտորաջրածնական թթվով մոլիբդենիտային խտանյուղերի մաքրման հաշվեկշիռը

№	Վերցվել է			Ժամանակ, ժ	Ստացվել է		
	Նյութի անվանումը	40% HF-ի ծախսը, մլ	t °C		կշիռը, գ	%, ելանյութային	չլ. նստվ. կար. %
1	Mo-ի խտան.	60	40	2	195,5	97,75	0,57
2	Mo-ի խտան.	60	40	4	194,0	97,0	0,25
3	Mo-ի խտան.	60	40	6	193,6	96,8	0,14
4	Mo-ի խտան.	60	60	2	194,1	97,05	0,21
5	Mo-ի խտան.	60	60	4	192,0	96,0	0,08
6	Mo-ի խտան.	60	60	6	191,8	95,9	0,04
7	Mo-ի խտան.	60	60	8	191,2	95,6	0,006

Խտանյուղը ֆտորաջրածնական թթվով մշակելուց հետո ենթարկվել է երրորդ տարալուծման, ազոտական թթվի ջրային լուծույթով, որի նպատակն է մնացած Al₂O₃ և Fe-ի ու Cu-ի սուլֆիդների (FeS₂, CuFeS₂) հեռացումը: Հավանական ընթացող ռեակցիաներն են.



Տարալուծումը կատարվել է հետևյալ ռեժիմներով: Բաժակի մեջ լցվել է խտանյութը և ջուրը պի = 1:1 հարաբերությամբ և ավելացվել է հաշվարկային քանակի ազոտական թթու: Փորձերը կատարվել են 40 և 60°C ջերմաստիճաններում, 6, 8, 12, ժ տևողությամբ: Տվյալ ժամանակի լրանալուց հետո խյուսը ֆիլտրվել է, նստածքը լվացվել է թորած ջրով մինչև pH = 6...7: Ֆիլտրատը և լվացման լուծույթները միացվել են: Լվացված խտանյութը և լուծույթները ենթարկվել են վերլուծության: Լվացված խտանյութը չորացվել է 120°C ջերմաստիճանում և ենթարկվել են մաղային և սպեկտրյալ վերլուծության: Տարալուծման արդյունքների հաշվեկշիռը ներկայացված է աղյուսակ 3-ում, որից պարզվում է, որ երկաթի լուծելի ունը խոնրակված է թթվի ծախսից, ջերմաստիճանից և տևողության ունից: Մաղային վերլուծության ունից պարզվել է, որ ստացված մաքուր մոլիբդենիտը ունի հետևյալ մաղայն կազմը +125 մկ -2,5 %; +100մկ-10%; +80մկ-4%; +60 մկ-11,5%; +50մկ-20,5%, -50մկ-51,5%:

Օպտիմալ պայմաններն են ազոտական թթվի ծախսը մեկ տ խտանյութի համար 300 լիտր, տարալուծման ժամանակը 12 ժ, ջերմաստիճանը 60 °C: Այդ դեպքում երկաթի պարունակությունը նվազում է մինչև 0,08%: Մոլիբդենի անցումը լուծույթ կազմում է ելանյութի 6,35%-ը:

Աղյուսակ 3
Ազոտական թթվով մոլիբդենիտային խտանյութերի տարալուծման հաշվեկշիռը

HNO ₃ մլ	T, °C	ժ	Նյութի անվ.	Ելք		Mo			Fe		
				քաշը	%	գ/լ	գ	Սկզ. %	%, գ/լ	գ	Սկզ. %
50	40	6	խտ.	477,7	95,5	-	-	-	0,79	3,8	32,34
			Լուծ.	2500	-	2,58	6,45	2,26	3,18	7,95	67,65
100	40	6	խտ.	474	94,8	-	-	-	0,5	2,37	20,17
			Լուծ.	2500	-	3,51	8,8	3,06	3,75	9,38	79,83
150	40	6	խտ.	471	94,2	-	-	-	0,25	1,18	10,04
			Լուծ.	2500	-	5,09	12,7	4,43	4,23	10,6	89,96
150	40	8	խտ.	469	-	-	-	-	0,25	1,17	10,0
			Լուծ.	2500	-	5,12	12,8	4,46	4,23	10,6	90,0
150	40	12	խտ.	468	93,6	-	-	-	0,23	1,07	9,10
			Լուծ.	2500	-	6,41	16,0	5,58	4,27	10,7	90,90



			ծ.								
50	60	6	խո.	471	-	-	-	-	0,21	0,98	8,43
			Լ ու լ ծ.	2500	-	3,5	8,7	3,13	4,3	10,8	91,57
100	60	8	խո.	464	-	-	-	-	0,15	0,69	5,92
			Լ ու լ ծ.	2500	-	6,4	16	5,57	4,42	11,1	94,13
150	60	12	խո.	460	-	-	-	-	0,08	0,37	3,13
			Լ ու լ ծ.	2500	-	7,3	18,3	6,35	4,55	11,4	96,85

Չորրորդ գլ ու խը նվիրված է մոլիբդենի սուլֆիդային խտանյուղերից մոլիբդենի եռօքսիդի, մաքուր միացությունների՝ երկսուլֆիդի, կալցիումի և կապարի մոլիբդատների, երկսիլիցիդի և լեգիրող նյութերի ստացման գործընթացների տեսական և տեխնոլոգիական հիմունքների մշակմանը:


Մոլիբդենի եռօքսիդ և կալցիումի մոլիբդատ

Յիմնվելով քիմիական, ռենտգենաֆային, սպեկտրային, ջերմածանրաչափական, ատոմա-աբսորբման, և դիֆերենցիալ-թերմիկական և այլ վերլուծական մեթոդների և մոլիբդենի սուլֆիդային խտանյուղերի ուղեկցող միներալներից մաքրման հետազոտությունների վրա, մշակվել է գունավոր մետաղներից մաքուր մոլիբդենի եռօքսիդի ստացման տեխնոլոգիա:

Բարձր որակի ֆերոմոլիբդեն ստանալու նպատակով հետազոտվել է մոլիբդենիտային խտանյուղերի մաքրումը գունավոր մետաղներից: Մշակվել է մոլիբդենիտային խտանյուղերի համալիր վերամշակման տեխնոլոգիական սխեմա (նկ.2), համաձայն որի մոլիբդենիտային խտանյուղերը ենթարկվում են նախնական 673...723 Կ ցածր ջերմաստիճանային թրծման, օդի և ջրային գոլորշու միջավայրում: Ջրային գոլորշու և սուլֆիդների ռեակցիաներն այդ ջերմաստիճաններում աննշան են, այն օգտագործվում է որպես ջերմաստիճանի կարգավորիչ: Ցածր ջերմաստիճանային թրծման ժամանակ ծանր գունավոր մետաղների սուլֆիդներն առաջացնում են սուլֆատներ և օքսիդներ որոնք ավել ուծելի են նոսր աղաթթվի լուծույթում, մոլիբդենիտը օքսիդանում է մինչև ցածր օքսիդներ, որոնք անլուծելի են աղաթթվում: Տեղի են ունենում մի շարք ռեակցիաներ որոնցից հիմնականներն են՝



Կիսաթրծված մոլիբդենիտային խտանյուղը գունավոր մետաղներից մաքրման համար տարալուծվել է 5...8 %-անոց աղաթթվի լուծույթով:



Նկ. 2. Մոլիբդենի տային խտանյուղի թերից տեխնիկական մաքրության մոլիբդենի եռօքսիդի և կալցիումի մոլիբդատի ստացման սխեման

Կիսաթործված մոլիբդենային խտանյուղը ենթարկվում է լրաթործման 600...620°C ջերմաստիճանում: Ստացված մոլիբդենի եռօքսիդը բավարարում է որակյալ ֆերոմոլիբդենի արտադրության պահանջներին, բացի դրանից մետաղական մոլիբդենի արտադրության ժամանակ, ամոնյակի ջրային լուծույթով տարալուծման գործընթացում գրեթե թափոնակույտ չի առաջանում, լավ լուծվում է 12%-անոց NH₄OH-ում:


Մոլիբդեն պարունակող լվացման լուծույթները, պղնձից և այլ խառնուրդներից մաքրման համար, չեզոքացվում են սոդայով մինչև pH ≈ 8: Գունավոր մետաղներից մաքրված լուծույթից, կալցիումի քլորիդի միջոցով, նստեցվում է կալցիումի մոլիբդատ: Դեկանտատը ուղարկվում է Mo-ի և Re-ի կորզման: Կալցիումի մոլիբդատը լվացվում է ջրով CaSO₄-ի անջատման համար: Ստացված կալցիումի մոլիբդատը բավարարում է ստանդարտի պահանջներին:

Մոլիբդենի երկուսի ֆիզ. և կապի մոլիբդատ Առաջին անգամ մշակվել է մոլիբդենի տային խտանյուղի համալիր վերամշակումով մաքուր և դիսպերս մոլիբդենի երկուսի ֆիզի. և կապի մոլիբդատի ստացման տեխնոլոգիա: Զետագոտվել են ֆլոտացիանյութերից մաքրման և

պարզված քաղաղման եղանակով շլամագերծման գործընթացները: Յետագոտվել է, խառնուրդների ընտրողական տարրալուծման եղանակով, ազոտական ու ֆտորաջրածնական խթունների նոսր լուծույթներով, մոլիբդենի տային խտանյութերի մաքրման գործընթացները: Ստացված մոլիբդենի երկսուլֆիդի բաղադրությունն է, 2H-MoS_2 99,8% և խառնուրդներ SiO_2 - 0,02...0,03%, Fe - 0,01...0,06%, Al_2O_3 - 0,02...0,024%, CaO - 0,01...0,015% MgO- 0,03%:

Յետագոտվել է ստացված մաքուր MoS_2 -ի հատկությունները: Ապացուցվել է, որ MoS_2 -ը իր որակով գերազանցում է բոլոր հայտնի պինդ քսանյութերին: Կարևոր պայմանը համարվում է դիսպերսությունը, այսինքն՝ դիսպերսության աստիճանը պետք է համապատասխանի մակերևույթի խորդուբորդությունների աստիճանի հետ: Խտանյութի հետագա մանրացումը կատարվել է շիթային ուղղահայաց խողովակային խցիկով աղացում: Խտանյութի այսպիսի մշակումն ապահովում է բարձր մաքրության և դիսպերսության մոլիբդենի երկսուլֆիդի ստացումը, որը գերազանցում է TY- 48-19-133-90-ի պահանջները:

Նկ. 3-ում բերված է ա) ստացված մաքուր մոլիբդենի երկսուլֆիդի տեսքը և բ) շիթային աղացում մանրացված հետո:




Նկ. 3. Մոլիբդենի երկսուլֆիդի տեսքը ա) մինչև և մանրացումը, բ) շիթային աղացում մանրացված ($\times 1000$)


Յամալի վերամշակումը ապահովելու համար մշակվել է վացման ազոտաթթվական լուծույթներից, հիդրոմետալուրգիական եղանակով, ստեխիոմետրական բաղադրությամբ գերմաքուր կապարի մոլիբդատի ստացման տեխնոլոգիա (նկ.4):

Ամոնիումի մոլիբդատը և քացախաթթվական կապարը, ջրում լուծելի մյուս աղերի համեմատ, ավելի հեշտ են մաքրվում խառնուրդներից, այդ իսկ պատճառով գերմաքուր կապարի մոլիբդատի ստացման համար ընտրվել է ամոնիումի մոլիբդատի և քացախաթթվական կապարի բարձր մաքրության լուծույթները և քիմիական նստեցման մեթոդը: Այս եղանակով կապարի մոլիբդատի ստացումն իրականացվում է հետևյալ

նեակցիայով.



Ամոնիումի մոլիբդատի լուծույթները ստացվել են մոլիբդենի երկսուլֆիդի ստացման գործընթացում, ազոտական թթվով տարալուծման ժամանակ առաջացած լուծույթների մաքրման եղանակով: Բարձր մաքրության ամոնիումի մոլիբդատի լուծույթ ստանալու նպատակով լուծույթը չեզոքացվել է ամոնիակի ջրային լուծույթով և մաքրվել է $(\text{NH}_4)_2\text{S}$ -ի լուծույթով:



Նկ. 4. Գերմաքրված մոլիբդենի երկսուլֆիդի մոլիբդատի և մոլիբդատի լուծույթի ստացման ընթացակարգը:

Բարձր մաքրության ամոնիումի մոլիբդատի լուծույթները ենթարկվել է ավելի խորը մաքրման, քանի որ չեն բավարարում կապարի մոլիբդատի մոնոբյուրեղների սինթեզման պահանջներին: Լուծույթը հիդրօքսիդների խառնուրդներից ավելի խորը մաքրման համար, որպես սկզբնական առաջացնող նյութ, օգտագործվել է լյուսնոգալիտի

սպիրտային լուծույթ: Ամոնիումի մոլիբդատի լուծույթին ավելացվել է 0,1%-անոց լյումոգալ իոնի սպիրտային լուծույթ: Co-ի, Ni-ի, Fe-ի, Cu-ի, Cr-ի, Al-ի հիդրօքսիդների խառնուրդները լյումոգալ իոնի հետ առաջացնում են ամուր կոմպլեքսներ, որոնց ադսորբցիայի նպատակով ավելացվել է EAY (9OUS -6217-74) տեսակի ակտիվացված ածուխ: Մաքրումը կատարվել է pH ≈ 7 արժեքի պայմաններում, pH – ի ավելի ցածր արժեքների դեպքում լյումոգալ իոնն առաջացնում է կոմպլեքսներ մոլիբդենի հետ: Քացախթթվական կապարը նույնպես մաքրվել է լյումոգալ ունի միջոցով:

Ստացված կապարի մոլիբդատի քիմիական կազմը. հիմնական նյութը $PbMoO_4$ - 99,99%; խառնուրդների պարունակությունը %-ներով Cu - $2 \cdot 10^{-5}$; Co - $6 \cdot 10^{-4}$; Ni - $2 \cdot 10^{-5}$; Cr - $3 \cdot 10^{-5}$; Fe - $5 \cdot 10^{-4}$:

Մոլիբդենի երկսիլիցիդ և սիլիցիումի սուլֆիդ:

Մետաղների սուլֆիդների վերականգնումը սիլիցիումով գրեթե ուսումնասիրված չէ, այդ իսկ պատճառով առաջին անգամ ուսումնասիրվել է սիլիցիումով մոլիբդենի երկսուլֆիդի վերականգնման ռեակցիաները:

Հետազոտվել են մոլիբդենի երկսիլիցիդի ստացումը ինչպես վառարանային այնպես էլ բարձր ջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզի (ԲԻՍ) մեթոդներով: Հետազոտության ներքին կատարվել են չեզոք (ազոտ, հելիում) և վերականգնող (ջրածին) միջավայրում:

Կատարվել է թերմոդինամիկական վերլուծությունը մոլիբդենի երկսուլֆիդից անմիջական երկսիլիցիդի ստացման ռեակցիաների հավասարակշռության, ջերմային էֆեկտների և ընթանալու հավանականությունը պարզելու համար: Համեմատումը ան համար հաշվարկները կատարվել են մեկ մոլ -ստոմ սիլիցիումի համար: Ընթացող հավանական ռեակցիաները հետևյալներն են:

1. $1/4MoS_2 + Si = 1/4MoSi_2 + 1/2SiS,$
2. $1/3MoS_2 + Si = 1/3MoSi_2 + 1/3 SiS_2,$
3. $1/2MoS_2 + Si = 1/2MoSi_2 + 1/2S_2,$
4. $1/2MoS_2 + Si + H_2 = 1/2MoSi_2 + H_2S,$
5. $1/3MoS_2 + Si + 1/3H_2 = 1/3MoSi_2 + 1/3H_2S + 1/3SiS,$
6. $3/7MoS_2 + Si + 4/7H_2 = 3/7MoSi_2 + 4/7H_2S + 1/7SiS_2,$
7. $2/7MoO_3 + Si = 2/7MoSi_2 + 3/7SiO_2,$
8. $1/3MoO_2 + Si = 1/3MoSi_2 + 1/3SiO_2:$


Բերված բոլոր ռեակցիաները 14034-ից բարձր ջերմաստիճաններում թերմոդինամիկորեն ընթացող են:

Մոլիբդենի երկսիլիցիդի վառարանային սինթեզման օպտիմալ պայմանների որոշման համար սինթեզը իրականացվել է տարբեր ջերմաստիճաններում, տարբեր տևողությամբ: Ելանյութերը լավ խառնելուց հետո ստացված խառնուրդը հիդրավիլ մամլիչով մամլվել է տարբեր ճնշումների տակ: Փորձերը կատարվել են 873...14734 միջակայքում և տարբեր տևողությամբ (30, 60, 90, 120 րոպե): Նկ. 5-ում բերված է օպտիմալ պայմաններում (1423 Կ և մեկ ժամ

սևնողունային
սիլիկատերմային
ռետնագենագիրը:

մոլիբդենիտային
մեթոդով ստացված

խտանյուն թից
փորձանմուշի



Նկ.5. Մոլիբդենիտային խտանյուն թից սիլիկատերմային մեթոդով ստացված մոլիբդենիտ երկսիլիցիդի ռետնագենագիրը (CuKα)

Չե տազոտվել է մոլիբդենի սուլիֆիդային հիդրոմետալուրգիական խտանյուն թի (KMF, ГОСТ -212-76, վերահրատարակված 1997թ.) որը պարունակում է Mo -54...58%, WO₃ - 2...2,5%, SiO₂ -0,1...0,4%, Na₂O -0,5...0,8%, Cu -0,005...0,01%, P-0,0005...0,01%, As - 0,03...0,05%, Re չի պարունակում, խտանյուն թում մոլիբդենը հանդես է գալիս օքսիդացման երկու աստիճանով՝ IV և VI (MoS₂, MoO₃, MoO₂):

Չե տազոտվել են ներքին ցույց են տվել, որ ԲԻՍ եղանակով մոլիբդենիտ երկսիլիցիդի ստացման մեխանիզմը բազմափուլ է: Այդ համակարգերում այրումը տեղի ունի երկու քիմիական փուլերով՝ մոլիբդենիտի վերականգնում միջև մետաղ և մոլիբդենիտ և սիլիցիումի փոխադրեցում: Վերականգնումը տեղի է ունենում սիլիցիումի սուլիֆիդների առաջացմամբ:

Որպեսզի ստացված սիլիցիդները չօքսիդանան ռեակցիաները տարվում են ջրածնի միջավայրում: Որպես հարուցիչ օգտագործվում մետաղական տիտանի և ածխածնի (մոնր) խառնուրդ՝ TiC –ի ստացման ստեխիոմետրիայով:


Չե տազոտվել են ներքին ցույց են տվել, որ ԲԻՍ եղանակով մոլիբդենիտի մակերևույթին տեղի է ունենում սիլիցիումի հետ կոնտակտ, որի արդյունքում այդ մասերում առաջանում են հետևյալ սիլիցիդային ֆազերը՝ Mo₃Si, Mo₅Si₃ և MoSi₂: Վերջնական արդյունքում որպես թերմոդինամիկորեն ավելի կայուն միացություն առաջանում է MoSi₂: Չե տազոտվել է հիդրոմետալուրգիական խտանյուն թի և սիլիցիումի փոխադրեցում: ԲԻՍ գործընթացը, բացահայտվել է այդ համակարգերի այրման օրինակ ավելի ունենում:

Նկ.6.-ում պատկերված է հիդրոմետալուրգիական խտանյուն թի և սիլիցիումի խառնուրդի (MoS₂ + 3Si


հարաբերության) մամլվածքի այրման արագության կախվածությունը նմուշի տրամագծից, մամլվածքի ծակոտկենսությունից, սիլիցիումի և մոլիբդենի խտանյութի հատկապես ախական կազմից:

Նկ.7-ում բերված է մոլիբդենի հիդրոմետալուրգիական խտանյութից ԲԻՍ մեթոդով մոլիբդենի երկսիլիցիդի ստացման տեխնոլոգիական ուղվագիծը:


ԲԻՍ մեթոդով ստացված նմուշի ձեռնտգենագիրը բերված է Նկ. 8-ում:



Նկ.6. Հիդրոմետալուրգիական խտանյութի և սիլիցիումի ստեխիոմետրական խառնուրդի մամլվածքի այրման արագության կախվածությունը նմուշի տրամագծից (1), մամլվածքի խտությունից (2), բովախառնուրդի հատկանքներից (3)



Նկ. 7. Մոլիբդենի հիդրոմետալուրգիական խտանյութից ԲԻՍ մեթոդով մոլիբդենի երկսիլիցիդի ստացման տեխնոլոգիական ուղվագիծը



Նկ. 8. Զիդրոմետալ ուրգիական խտանյ ու թից ԲԻՍ մետթոդով ստացված նմուշի ռենտգենագիրը (CuK α)

Սուլիբդենի սուլիֆիդային խտանյ ու թերից ստացված մոլիբդենի երկսիլիցիդից պատրաստվել են բարձր ջերմաստիճանային տաքացուցիչներ: Տաքացուցիչների հատկությունները և պայմանները նախատեսվում են սուլիդներով և $\text{MoSi}_2\text{-Me}^{\text{IV}}\text{B}_2$, $\text{WSi}_2\text{-Me}^{\text{IV}}\text{C}$ համակարգերը: Ցույց է տրված, որ չորրորդ խմբի էլեմենտների երկբորիդները և կարբիդները համատեղելի են MoSi_2 -ի հետ, այս համակարգերի հիման վրա կարելի է մշակել բարձր էլեկտրահաղորդիչ և հրակայուն, կերամիկաներ:

Սիլիցիումի երկսուլիֆիդ: Պղնձի օքսիդացած և խառը հանքանյութերի փոփոխվող ոտացումով վերամշակման եղանակը հիմնված է պղնձի օքսիդացած միներալների նախնական մակերևույթային սուլիֆիդացման գործընթացի վրա:

Ներկայումս արտադրության մեջ օգտագործվող սուլիֆիդարարների ջրային և ուծույթներն ունեն հիմնային ռեակցիա: Ապացուցված է, որ պղնձի կայուն սուլիֆիդներ առաջանում են թթվայինից մինչև չեզոք միջավայրում: Սիլիցիումի սուլիֆիդի կիրառման դեպքում առաջանում է թույլ թթվային միջավայր, որը նախատում է պղնձի օքսիդացած միներալների մակերևույթին կայուն սուլիֆիդային թաղանթների առաջացմանը: Սիլիցիումի սուլիֆիդը նատրիումի սուլիֆիդի հետ առաջացնում է նատրիումի թիոկոմպլեքս $\text{Na}_2[\text{SiS}_3]$:

Ուսումնասիրվել է սիլիցիումի սուլիֆիդի և նատրիումի թիոկոմպլեքսի ու պղնձի օքսիդացած միներալների (ազուրիտ, մալախիտ, կուպրիտ, տենորիտ) փոխազդեցության ռեակցիաները: Ապացուցվել է ցածր ջերմաստիճաններում սիլիցիումի սուլիֆիդի և նատրիումի թիոկոմպլեքսի բարձր ռեակցիոն ունակությունը, որը թույլ է տալիս աղացման գործընթացում հրականացնել պղնձի օքսիդացած միներալների մակերևույթների խորը սուլիֆիդացում: Պղնձի օքսիդացած միներալների սուլիֆիդացման գործընթացի վրա ազդում են ջերմաստիճանը, տևողությունը, սուլիֆիդարարի ծախսը, ինչպես նաև հանքանյութերի մանրացման աստիճանը: Գործընթացի տևողության և սուլիֆիդարարի ծախսի ավելա-

ցումը բարձրացնում է օքսիդացած միներալների ազոլրիտի, կոլարիտի, տենորիտի և մալախիտի սուլֆիդացման աստիճանը:

Հիլեդերոդ գլուխը նվիրված է մոլիբդենի սուլֆիդային խտանյութերից լեգիրող նյութերի ստացման տեսական և տեխնոլոգիական հիմունքների մշակմանը: Ֆերոմոլիբդենը պարունակում է ստանդարտով թույլատրելի գունավոր մետաղների խառնուրդներ, միջառք դեպքերում այդ կեղտավածության աստիճանը բարձր է, որը ստիպում է հատուկ պրոպատների և համաձուլվածքների հալման ժամանակ օգտագործել մաքուր և թանկարժեք մետաղական մոլիբդեն, այդիսկ պատճառով անհրաժեշտություն է առաջանում ստանալ հատուկ մաքրության ֆերոմոլիբդեն: Առավել վնասակար է պղինձը, որը պրոպատին տալիս է սառնաբեկունություն: Ուսումնասիրվել է մոլիբդենիտային խտանյութերը գունավոր մետաղներից մաքրման և դրանցից մոլիբդենի եռօքսիդի ստացումը: Ըստ տեխնոլոգիական սխեմայի (նկ.2) մոլիբդենիտային խտանյութերը ենթարկվում են նախնական ցածրջերմաստիճանային թրծման 673-723 Կ, օդի և ջրային գոլորշու միջավայրում, այնուհետև լվացվում է աղաթթվի 5-6 % -անոց լուծույթով պի = 1:2, տևողությունը 2...3ժ:

Պղնձի պարունակությունը նվազում է 1,2-ից մինչև 0,02%: Հատուկ բարձր մաքրության ֆերոմոլիբդեն ստանալու համար հետազոտվել է ֆերոմոլիբդենի ստացումն ալյուրմինաթերմային եղանակով: Fe-Mo համակարգի վերլուծության և հետազոտության նյութի արդյունքում բացահայտվել է ալյուրմինաթերմային եղանակով ֆերոմոլիբդենի ստացման տեխնոլոգիական առանձնահատկությունները և մեխանիզմը: Ցույց է տրված, որ մոլիբդենի եռօքսիդի վերականգնումը երկաթի առկայությամբ, բավականին հեշտացնում է վերականգնման գործընթացը:


Մոլիբդեն պարունակող պրոպատների արտադրությունում որպես լիգատուրա, ֆերոմոլիբդենից բացի, օգտագործվում է նաև կալցիումի մոլիբդատը: Հարկավոր է նշել, որ կալցիումի մոլիբդատի ստացման հիդրոմետալուրգիական գործընթացը, սկսած հանքանյութերից, ավելի հեշտ է և էժան քան ֆերոմոլիբդենինը: Կալցիումի մոլիբդատի արտադրության համար կարելի է օգտագործել նույնիսկ բոլոր տեսակի սուլֆիդային կիսաարտադրանքներ: Չնայած այդ առավելություններին, կալցիումի մոլիբդատը համարվում է ոչ տեխնոլոգիական նյութ և ունի սահմանափակ կիրառություն և մոլիբդենի յուրացման ցածր աստիճան (մոտավոր 80%): Մոլիբդենի յուրացման աստիճանը բարձրացնելու նպատակով հետազոտվել է կալցիումի մոլիբդատից նոր լիգատուրայի ստացման գործընթացը: Նոր լիգատուրան ստացվում է 10% բենտոնիտային կավի խառնուրդով, հատկավորման միջոցով: Հատկավորված կալցիումի մոլիբդատի առավելությունը կայանում է նրանում, որ մետաղի

լեգիրման ժամանակ բացառվում է փոշեգոյացումը, ավելանում է խտությունը և ջերմահաղորդականությունը, բարելավվում է հալման ու լեգիրման պայմանները, դրանց հետևանքով մեծանում է մոլիբդենի յուրացման աստիճանը:

Յետագոտվել է կալցիումի մոլիբդատի և 10% բենտոնիտային կավի խառնուրդի հատկությունները դիֆերենցիալ-թերմիկական, XIK- սպեկտրադիտակն, քիմիական, ռենտգենաֆազային և այլ մեթոդներով:

